ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ASHOT SALNAZARYAN
SRBUHI ISRAELYAN

RELATIONSHIP BETWEEN THE FINANCIAL DEPTH, MICROFINANCING AND FINANCIAL INCLUSION IN THE RA

Key words: *financial inclusion, microfinance, financial depth, financial services, quality of life, economic growth*

Under current conditions, microfinance, financial inclusion and financial depth of the economy have a huge potential not only to improve the quality of life of the poor, but also to ensure economic growth. The article discusses the interdependence of these indicators, with the help of modern mathematical methods, their estimates for the Armenian economy are given and the corresponding conclusions are drawn up.

ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԳՈՐԾԸՆԹԱՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *առևտրային բանկ, կառավարում, բիզնես-գործընթացներ, գործընթացային բյուջետավորում*

Բյուջետավորումը կորպորատիվ կառավարման ժամանակակից տեխնոլոգիա է, որը հնարավորություն է տալիս իրականացնելու առևտրային բանկերի ֆինանսների կառավարման կարևորագույն գործառույթներ: Սակայն, բյուջետավորման ավանդական մոդելն ունի որոշակի թերություններ: Միջազգային փորձում ներկայումս լայն տարածում է ստանում գործընթացային բյուջետավորումը, որն ավանդականի նկատմամբ ունի ակնհայտ առավելություններ: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործընթացային բյուջետավորման ներդրումն առևտրային բանկերում կապված է զգալի բարդությունների հետ:

Բյուջետային կառավարման համակարգը ներկայումս համարվում է ֆինանսների կառավարման առավել տարածված և հայտնի կառավարչական տեխնոլոգիաներից մեկը: Այն հնարավորություն է տալիս իրականացնելու կազմակերպության (այդ թվում՝ առևտրային բանկի) կառավարման կենսականորեն կարևոր գործառույթներ, մասնավորապես.

- բանկի առջև դրված խնդիրների հստակ ձևակերպում (որոնք պետք է բխեն վերջինիս ռազմավարական նպատակներից և ուղղված լինեն դրանց իրագործմանը),
- ռեսուրսների օպտիմալ պլանավորում,

- բանկի գործունեության արդյունքների գնահատում և դրա հիման վրա անձնակազմի խրախուսման համակարգի կիրառում,
- նպատակադրված առաջադրանքների կատարման նկատմամբ վերահսկողություն և այլն:

Սակայն, ավանդական բյուջետավորումն ունի մի շարք թերություններ, որոնք հնարավորություն չեն տալիս առկա ռեսուրսներն օգտագործելու առավելագույն արդյունավետությամբ, արձանագրելու առավել բարձր նվաճումներ թե մատուցվող ծառայությունների տեսականու և ծավալի, և թե դրանց սպասարկման որակի գծով: 21-րդ դարի պահանջներին համահունչ տեխնոլոգիաները պարտադրում են ուշադրությունը կենտրոնացնել ոչ միայն և ոչ այնքան եկամուտների ավելացման (քանզի անընդհատ խորացող մրցակցության և սահմանափակ ռեսուրսների պայմաններում եկամուտների վերին շեմը շարունակաբար ավելացնել հնարավոր չէ), որքան ծախսերի հնարավորինս տնտեսման վրա: Եվ չնայած բյուջետային կառավարման տեխնոլոգիաներն էապես նպաստում են այս խնդրի լուծմանը, սակայն թույլ չեն տալիս ապահովել առավելագույն արդյունավետություն, քանզի կառավարման ֆունկցիոնալ մոտեցման պայմաններում բանկի գործունեության կազմակերպման և իրականացման խնդրահարույց միջակայքերը մնում են տեսադաշտից դուրս և ազդում վերջնական արդյունքների մակարդակի վրա: Մասնավորապես՝ կարելի է մատնանշել ավանդական բյուջետավորման հետևյալ հիմնական թերությունները.

- չի նպաստում կազմակերպության արժեքի ավելացմանը,
- պլանավորումը կատարվում է գլխավորապես նախորդ ժամանակահատվածի տվյալները որոշակի գործակցով ճշգրտելու միջոցով,
- հիմնական ուշադրությունը հատկացվում է ծախսերին, այլ ոչ թե ելքային արդյունքներին,
- չի բացահայտում և չի ուսումնասիրում բանկային ծառայությունների և սպառողների այն առանձնահատկությունները, որոնք հանգեցնում են պլանայինից փաստացի ցուցանիշների զգալի շեղումներին,
- չի նպաստում գործընթացների որակի անընդհատ աճին,
- հիմնական ուշադրությունը հատկացվում է ծախսերի կենտրոններին, այլ ոչ թե բիզնես-գործընթացների կատարելագործմանը,
- նպաստում է բյուջեների հետ կատարվող հնարավոր մանիպուլյացիաներին,
- հաշվի չի առնում աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ ըստ գործունեության տեսակների,
- չի տրամադրում ֆինանսական հաշվետվություններ՝ ըստ բիզնես-գործընթացների,
- չի հետևում սպասարկման մակարդակին,
- չի բացահայտում և հետևում կորուստների ծավալներին,
- հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է հիմնական և փոփոխուն ծախսերին, այլ ոչ թե չօգտագործված ֆունկցիոնալ հնարավորություններին:

Ժամանակակից բիզնեսում տիրող իրավիճակը բնորոշվում է արտաքին միջավայրի

արագ փոփոխություններով, անընդհատ աճող մրցակցությամբ և հաճախորդների հարաճուն պահանջմունքներով: Շուկայական դաժան պայմաններին դիմակայել և հաջողության հասնել կարող են միայն այն առևտրային բանկերը, որոնք արագ հարմարվում են նոր իրավիճակին, կիրառում արդյունավետ տեխնոլոգիաներ՝ ռեսուրսների խնայողաբար ծախսի պայմաններում, զգալի ուշադրություն են հատկացնում բանկային ծառայությունների որակին՝ գործառնական գործունեության, պլանավորման և կառավարման գործընթացների որակյալ մակարդակով իրականացնելու միջոցով:

Որակի ապահովման նկատմամբ պահանջները տեղափոխվել են բանկային պրոդուկտներից դեպի գործընթացները: Պրոդուկտի կամ ծառայության որակը ձեռք է բերվում գործընթացների որակի բարձրացման հաշվին:

Առևտրային բանկերի կառավարման նկատմամբ ժամանակակից մոտեցումներից մեկը, որն ապահովում է բավականին բարձր արդյունավետություն, կառավարման գործընթացային մեթոդն է, ինչի հիմքում բանկի գործունեությունը կազմող բիզնես-գործընթացների ամբողջությունն է: Կիրառելով գործընթացային կառավարում՝ առևտրային բանկը հնարավորություն է ստանում.

- բարձրացնելու անձնակազմի կառավարման արդյունավետությունը, քանի որ գործընթացային մոտեցման դեպքում աշխատակիցները շահագրգռված են գործընթացի ժամանակին, փուլ առ փուլ իրագործման մեջ, ինչը ցանկացած գործընթացի իրագործումը դարձնում է առավել հստակ, կանխատեսելի և արդյունավետ,
- հավաքագրելու տեղեկատվություն, ինչպես նաև ձևավորելու վիճակագրություն գործընթացների կանոնակարգերը պահպանելու և իրագործելու վերաբերյալ,
- բացահայտելու գործընթացների իրականացման համար պահանջվող աշխատաժամանակի և այլ ծախսերի կրճատման, ինչպես նաև ռիսկերի նվազման քայլերը,
- կրճատելու կառավարչական որոշումների ընդունման ժամկետները:

Չնայած նրան, որ գործընթացային կառավարումը հանգեցնում է արտադրանքի և ծառայությունների որակի բարձրացմանը, արդյունավետ գործունեությանը, ինչպես նաև խորացող մրցակցությանը հաջող դիմակայելուն, այնուհանդերձ, դրա ներդրման ընթացքում առևտրային բանկերը բախվում են էական բարդությունների, հիմնախնդիրների և բախումային իրավիճակների:

Գործընթացային մոտեցման ներդրումը կապված է բանկի ներքին միջավայրի գործունեության և արդեն ձևավորված աշխատելաոճի, հմտությունների, փորձի և երբեմն նույնիսկ աշխատակիցների և ղեկավար անձնակազմի մտածելակերպի փոփոխությունների հետ: Կառավարման նշված մոդելի իրագործումը բավական բարդ է, սակայն անհրաժեշտ բանկի հետագա արդյունավետ գործունեությունը երաշխավորելու համար:

Վերլուծելով գործընթացային կառավարման ներդրման հետ կապված հայրենական և միջազգային փորձը՝ կարելի է առանձնացնել հիմնախնդիրների մի ողջ խումբ, որը խոչընդոտում է կառավարման այս մոդելի բարեհաջող ներդրումը և իրագործման բնականոն ընթացքը: Նշված հիմնախնդիրները տեսական, մեթոդական, կիրառական, մշակութային բնույթի են, շահերի բախումը, ղեկավարության ցանկությունն աշխատակիցնե-

րին հնարավորինս հեռու պահելու բանկի կառավարման հարցերից, բոլոր գործընթացները միանգամից ներառելու փորձը, անձնակազմի կողմից ցուցաբերվող դիմադրությունը, և, իհարկե, մեր կարծիքով ամենակարևորը՝ ազգային մտածողության առանձնահատկությունները, այդ թվում և՝ բիզնեսի կառավարման հարցերում: Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Մեթոդական բնույթի հիմնախնդիրներից են.

1. կառավարման գործընթացային կողմնորոշման մոդելին անցման վերաբերյալ մեթոդական փաստաթղթերի, հստակ նախագծերի բացակայությունը,
2. բիզնես-գործընթացների կանոնակարգումը նկարագրող ներքին չափորոշիչների բացակայությունը,
3. բիզնես-գործընթացների կատարելագործման գործիքակազմի և արդյունավետ մեթոդաբանությունների ընտրության բացակայությունը,
4. բիզնես-գործընթացների մոդելավորման գործիքակազմի կիրառման մեթոդների բացակայությունը:

Կիրառական բնույթի հիմնախնդիրներից են.

1. գործընթացային կառավարմանն անցման նախագծի նպատակի և խնդիրների ոչ ճիշտ կամ ոչ հստակ ձևակերպումը, դրվածքը,
2. գործընթացային կառավարմանն անցման հարցում վերին օղակի կառավարիչների շահագրգռվածության բացակայությունը,
3. ինչպես աշխատակազմի, այնպես էլ ղեկավար անձնակազմի գործունեության ոչ կանոնակարգված բնույթը, դիմադրությունը՝ ցանկացած բնույթի փոփոխություններին,
4. ղեկավարության մտադրությունն ու տրամադրվածությունը նախագծի ներդրման արդյունքում արագ և ցանկալի ֆինանսական ցուցանիշներ ձեռք բերելու հարցում,
5. նախագծի իրագործման համար ոչ բավարար ռեսուրսների հատկացումը,
6. բարեփոխումների իրագործման փորձը ոչ թե «վերևից ներքև», այլ «ներքևից վերև»,
7. բանկի ներսում նախագծի ընթացիկ արդյունքների ոչ լրիվ և ոչ արժանահավատ լուսաբանումը,
8. բանկի բիզնես-գործընթացների վրա ոչ բավարար կենտրոնացվածությունը, գործունեության անբավարար փաստաթղթավորումը կամ դրա իսպառ բացակայությունը,
9. գործընթացային մեթոդների մշակման և ներդրման բնագավառում ոչ արհեստավարժ մոտեցումը՝ պայմանավորված թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ նախադրյալներով:

Չնայած շուկայում տեղ գտած արմատական փոփոխություններին, առևտրային բանկերի կառավարման կառուցվածքը հիմնականում մնում է անփոփոխ: Հաճախ վերջինս ծանրաբեռնվում է այնպիսի ստորաբաժանումներով, որոնց գործառույթները կարելի է փոխանցել այլ ընկերություններին՝ նվազեցնելով վերադիր ծախսերը: Եթե գործընթացային կառավարման մոդելն ամբողջությամբ հնարավոր չէ ներդնել, ելնելով ղեկավա-

ության հոգեբանորեն անպատրաստ վիճակից կամ ֆինանսական բարդություններից, ապա դրա ներդրումը ոչ միայն սպասվելիք արդյունքը չի տա, այլև կհանգեցնի էական վնասների:

Շահերի բախման հիմնախնդիրը կապված է գործընթացային կառավարման «թափանցիկության» հետ: Վերջինս հնարավոր չէ իրագործել առանց առանձին բիզնես-գործընթացների արժանահավատ նկարագրման, փաստաթղթավորման՝ սկսած ռազմավարական նպատակների հստակ սահմանումից մինչև առանձին գործառնությունների մանրամասն նկարագրությունը: Սակայն, առևտրային բանկերում նշված գործողությունները միշտ չէ, որ կատարվում են գրագետ, արհեստավարժ և ամենակարևորը՝ հետևողական կերպով: Դա համընդհանուր թերություն է:

Փորձելով ընդգրկել բոլոր գործընթացները միանգամից՝ բանկերը հաճախ բախվում են ռեսուրսների անբավարարության և այդչափ լայնածավալ նախագիծը կառավարելու բարդության խնդիրներին: Գործընթացային բյուջետավորում ներդնելիս կարևոր է արագ անցնել ողջ պարբերաշրջանը՝ սկսած գործընթացի նկարագրումից մինչև դրա իրագործման և արդյունավետության վերաբերյալ որոշակի տեղեկատվության հավաքագրումը:

Բացի վերը նշվածից, բանկի ղեկավարությունը հաճախ բախվում է այնպիսի լուրջ խնդրի, ինչպիսին է անձնակազմի կողմից ցուցաբերվող դիմադրությունն ամեն տեսակի փոփոխություններին: Գործընթացային բյուջետավորում ներդնելու և իրագործելու հետ կապված ցանկացած գործունեություն աշխատակիցների կողմից դիտարկվում է որպես լրացուցիչ, ավելորդ և բավարար կարևորություն չներկայացնող: Այս հարցի օպտիմալ լուծման տարբերակներից մեկը բանկի ղեկավարության հետևողական մոտեցումն է ընդունված որոշումների, տրված առաջադրանքների ժամանակին և գրագետ իրագործման հարցում: Ամենամեծ ցանկությունն ու ամենաարհեստավարժ հրամանները, հրահանգներն ու որոշումներն արժեք չունեն, եթե դրանք չեն ուղեկցվում դրանց կատարման նկատմամբ հետևողական վերահսկողությամբ և թերացումների դեպքում՝ համապատասխան պատժամիջոցների կիրառմամբ:

РУЗАН СААКЯН

ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ ПРОЦЕССНОГО БЮДЖЕТИРОВАНИЯ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РА

Ключевые слова: *коммерческий банк, управление, бизнес-процессы, процессное бюджетирование*

Бюджетирование является современной технологией корпоративного управления, дающей возможность реализовать важнейшие функции управления финансами коммерческох банков. Однако традиционная модель бюджетирования имеет определенные недостатки. В международной практике нынче широко применяется процессное бюджетирование, которое имеет очевидные преимущества по сравнению с традиционной моделью бюджетного управления. Между тем, исследования показывают, что внедрение процессного бюджетирования в коммерческих банках связано со значительными проблемами.

RUZAN SAHAKYAN

PROCESS BASED BUDGETING IMPLEMENTATION PROBLEMS IN COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *commercial bank, management, business processes, process based budgeting*

Budgeting is a modern technology of financial management in commercial banks. Meanwhile, budgeting current mechanisms have some disadvantages. In the western management process based bagdeting is widely implemented, wich has significant advantages compared to the classic budgeting methods. At the same time research shows that process based budgeting implementation in commercial banks faces significant problems.

ՆՈՐԱՅՐ ՍԱՖԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *բանկի շահույթ, շահութաբերության գործակիցներ, շահութաբերության վերլուծություն, բանկային համակարգի շահութաբերության միտումներ*

ՀՀ բանկային համակարգը թևակոխում է զարգացման նոր որակական փուլ, որի առանցքային մարտահրավերներից են բանկային գործունեության աննախադեպ արագ տեմպերով թվայնացումը և ֆինանսական կայունության ապահովումը մրցակցության թեժացման, անորոշությունների ու ռիսկերի պերմանենտ աճի պարագայում: Ֆինանսաբանկային համակարգում ձևավորված իրավիճակի հրամայական պահանջներն են ինչպես առանձին բանկերի, այնպես էլ բանկային համակարգի գործունեության արդյունավետության և շահութաբերության ցուցանիշի մասնավորապես որակական վերլուծությունը և բացահայտված միտումների իրատեսական գնահատումը:

Շահութաբերությունը, որպես տնտեսագիտական կատեգորիա, միշտ էլ բանավեճերի առարկա է հանդիսացել տնտեսագետների շրջանում: Առավել իրարամերժ կարծիքների տեղիք են տալիս հատկապես շահութաբերության գնահատման համակարգը և շահութաբերության տնտեսագիտության մեկնաբանությունը: Մյուս կողմից՝ շահութաբերությունն առնչվում է ֆինանսատնտեսական գործունեության բազմաթիվ ցուցանիշների հետ՝ որպես արդյունավետության գնահատման ամփոփ ցուցանիշ, թեպետ ժամանակակից տնտեսագիտության մեջ բանավիճային հիմնախնդիր է արդյունավետության կատեգորիայի մեկնաբանությունը նույնպես: